

Ա. ՉՈՐՅԱՆ

ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒՄ

891.99.5
Զ-83

ՊԵՏՐՈՍ

ՀԱՅՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1937

30 MAY 2011

891.9915

9-83.

ԱՐ

ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒՄ

Մի ամառ, լեռք գեռ փոքք ելի, հլուր ելի
գնացել քեռուս այդին:

Յես առաջին անգամն ելի լինում խա-
ղողի այգում. այդ պատճառով ամեն ինչ
այդտեղ նոր եր ինձ համար ու հետաքըր-
քրական, — թե խաղողի թփերը, թե դեղձի
ու փշատի ծառերը, թե հնձանը և թե
խաղող քաղելը: Ամբողջ որը, ամեն ինչ
մոռացած, թափառում ելի այգում ու լեռե-
կոլան հոգնած ու անուշ քնում հնձանում:

— Եղ անպիտան վոզնին խաղողը գո-
ղանում ե, — ասավ քեռիս կնոջը մի լեռեկո,
լեռը թելում ելինք բոլորս միասին:



Վողնին — խաղող... Յես վողնի տեսել
ելի, բայց լերբեք չելի լսել, վոր թե վող-
նին խաղող գողանաւ Այդ խեղճ, անձարակ
կենդանին, վոր շարունակ իր փշե մուշտա-
կում փաթաթված ընկած ե լինում մութ
ու ծածուկ տեղեր և հազիվ ե ման գա-
լիս — ինչպես կարող ե բան գողանալ, այն
ել խաղող, վոր մենք հազիվ ենք պոկում
վորթից:

— Թեսի, վողնին ձեռ ունի, վոր խա-
ղող պոկի՞, — հարցը յես:

— Բանն ել հենց այն ե, վոր չունի ու
պոկում ե, մի որ նայի, կտեսնես:

Յես սկսեցի վնտուել, հետեւել, թե վոր-
տեղ են ապրում վողնիները, ինչպես են
դուրս գալիս ու գողություն անում: Ինձ
շատ ծիծաղելի լեր թվում վողնու գողու-
թյունը. լերբեմն ել ստածում ելի, թե քեռիս,

յերեի, թիուրիմացութիան մեջ ե կամ, գուշե, հանաք արավ:

Ու մի յերկու որ զգուշութիամբ թըմբից-թումբ անցնելով՝ նայում ելի թփերի արանքը, թփերի տակ, թե խաղող գողացող վողնի չի յերեռմ արդիոք:

Այդ որը վոչինչ չտեսա, բայց հետեւալ որը, յերբ մի թփի մոտ նստած խաղող ելի փորձում, հանկարծ տարորինակ խշխոց լանցի. ինձ թվաց, թե ոճ ե սողում, ու մնացի անշարժ, աչքերս խշոցի կողմը:

Ու ինչ եք կարծում, ինչ լիներ լավ լինի:

Վողնին: Բայց վոչ թե մենակ, այլ ճուտերով: Խողի նման՝ յերեք վորքրիկ, վորքրիկ ձագերը յետեր գցած, ինչ-վորքարակ ձայն հանելով, գալիս եր գլուխը փշե կծիկից հանած, նույնը արել ելին և ձագերը:

Գալիս եր նա թփերի առաջ կանգ առնելով ու վերև նայելով: Այդ ժամանակ կանգ ելին առնում և ձագերը ու տարորինակ ծվծվոցով նայում իրենց մորը:

Այդ ձագերը .. այնքան վորքը ելին, կարծես խաղալիք լինելին:

Մալր վողնին ալդպես թփերին նաւելով՝ շարունակում եր քայլել դեպի իմ կողմը:

Յես մտա թփերի արանքը, տապ արի, վոր նա ինձ չտեսնի: Լսել եմ, վոր վողնին մարդ տեսնելիս՝ կծիկ ե դառնում ու անշարժանում:

Նա մի վորքը ել առաջ յեկավ ու կանգ առավ մի մեծ թփի տակ, վորի վողկուլը-ները կախվել, հասել ելին գետնին:

Մալր վողնին մոտեցավ այդ վողկուլը-ներից մեկին ու վողնիական մի ձայն հանեց:



Ճուտերը մոտեցան նրան:

Ալդ ժամանակ մայրը բարձրացավ մի
փոքր ու առաջին թաթերով սկսեց խաղողի
հատիկները լպոկել վողկուզներից ու թա-
փել գետին:

Նա աշխատում եր լերկու թաթով ել.
ամեն անգամ թաթը վողկուզներին տալիս՝
հատիկներն ընկնում ելին գետին:

Մինչ մայրն զբաղված եր դրանով՝
ձագերը փորձում ելին բարձրանալ թփի
ճյուղերին:

Շատ ծիծաղելի ելին ալդ փշոտ փոք-
րիկներն իրենց անճարակ փորձերով. հազիվ
բարձրանում ելին մի թիզ, լերկու թիզ, նո-
րից ընկնում ելին գետնին; Ընկնելով՝ փոր-
ձում ելին դարձալ և նորից ելին ընկնում:

Իսկ մայր վողնին լեռանդով շարունա-
կում եր հատիկները վողկուզներից թափել
գետնին:

Յերբ բավական թափել եր, նա խոճ-
կոբի նման մի ձախ հանեց դարձալ:

Զագերը փշոտ գնդակների նման գլոր-
վեցին դեպի մայրը:

Ալդ ժամանակ մալը վոզնին թափալվեց
գետնի վրա, այնտեղ, ուր խաղողի հատիկ-
ներն ելին թափված:

Թափալվեց ու վեր կացավ:

Հատիկները մեկ-մեկ խրվելցցվել ելին
նրա փշերին:

Վեր կենալով՝ նա առաջկա պես խըռ-
կացրեց:

Մնացած հատիկների վրա թափալվե-
ցին ձագերը: Հատիկները խրվեցին-ցցվեցին
և նրանց փշերի վրա, ու նրանք դրանից
մեծացան կարծես ու ավելի նմանեցին խա-
ղալիքների:

Յերբ յերեք ձագն ել հերթով թափալ-
վեցին վեր կացան՝ նորից լսվեց մալը վոզ-
նու տարրինակ ձայնը, վոր չգիտես խոճ-
կորի ձայնի յեր նման՝ թե թռչունի մնչոցի:

Ու ալդ ձայնը մի յերկու անգամ կըրկ-

նելով՝ նա յետ դարձավ նորից յեկած ճանա-
պարհով, ճուտերը նրա հետեւից: Բոլորն ել
խաղողով բեռնավորված:

Անքան հետաքրքրական ու տարրի-
նակ եր այդ ամենը, վոր յես անշարժ նըս-
տած նրանց ելի նախում զարմացած:

Իսկ յերբ նրանք բավական հեռացան՝
վազեցի նրանց յետելից — մեկն ու մեկին
բռնելու կամ սպանելու, — նրանք արդեն
թագնվել ելին չգիտեմ ուր:

Յերեկոյան, յերբ տեսածիս մասին
պատմեցի քեռուս, նա չզարմացավ.

— Ի՞արկե, ասավ, վոզնին եղան ա...

Իսկ յերբ հայտնեցի, թե ուզում ելի
նրանց սպանել, նա գլուխն որորեց.

— Եղան բան չանես... Յեթե վոզնին
չլինի, այդին ոձերով կլցվի:

— Իսկ վոզնին ոձին ի՞նչ ե անում վոր...

— Ի՞նչ ա անում: Ոձերին վոչնչացնում ա: Նա ոճի պոչը բռնում ա ու գունդ ու կծիկ գալիս: Ոձը թափահարում է ա իրեն, վոր պոչն ազատի: Զի ազատվում: Տեսնում ա չի ազատվում, սկսում ե խփել բռնողին: Այնքան ե խփում՝ արյունլվա ա լինում վագնու փշերից ու սատկում: Հապա... Վոզնին մի տեսակ պահապան ա. գրա համար նրան չեն սպանում. գլուխը քարը թե խաղող ա գողանում...



Պատ. խմբագիր՝ Ար. Զարյան
Նկարներ՝ Ս. Գասպարյանի
Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Մրգագրիչ՝ Ար. Նշանյան

Քլավլիսի լիազոր Կ-4478, հրամ. 3960
Պատվեր 1, սիրած 5000
Պետրատի տպարան, Յերեզան, Առունեցի, 4



ՀՀ Ազգային գրադարան



NL0400030

8480

ԴԻՆԸ 75 ԿՈՊ.

СТ. ЗОРЯН
В ВИНОГРАДНОМ САДУ
Гиз ССРА, Ереван, 1937 г.